Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2022թ. հուլիսի 28

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Արթուր Սաքունց	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Նաիրա Սարդարյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Մարիա Պողոսյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Վարդիթեր Դադունց	«Մարդը կարիքի մեջ« հասարակական հիմնադրամ
Գարիկ Հովհաննիսյան	«Մարդը կարիքի մեջ« հասարակական հիմնադրամ
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Կարինե Աբելյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ
Հունան Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարարական կազմակերպություն
Տաթևիկ Նալբանդյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարարական կազմակերպություն

Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպություն
Նելի Դոնոյան	«Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոն» հասարակական կազմակերպություն
Նվարդ Փիլիպոսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Մարուսյա Ճաղարյան	ֆիզիկական անձ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Տաթևիկ Ստեփանյան	նախարարի տեղակալ
Աննա Ժամակոչյան	նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	նախարարի տեղակալ
Սամվել Մուրադյան	գլխավոր քարտուղար
Վիկտորյա Այդինյան	նախարարի խորհրդական
Զարուհի Մանուչարյան	մամուլի քարտուղար

Բացակայում էին՝

Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Հայկուհի Թովմասյան	ֆիզիկական անձ
Տաթևիկ Կարապետյան	ֆիզիկական անձ
Դավիթ Ամիրյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպություն
Անի Գաբրիելյան	«Լուսաստղ» հասարակական կազմակերպություն
Միրա Անտոնյան	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **Ողջույնի խոսք. ծանոթացում խորհրդի կազմը համալրած ՀԿ-ների հետ**
   (Ներկայացնող՝ Խորհրդի Նախագահ)

2. **Սոցիալական բարեկեցության 2022-2026թթ. ռազմավարության ներկայացում**

   (Զեկուցող՝ Վիկտորյա Այդինյան)

3. **Հարցուպատասխան. քննարկում**

   - Խորհրդի անդամներ (ՀԿ ներկայացուցիչներ, անհատներ)
   - ԱՍՀ նախարար
   - ԱՍՀ նախարարի տեղակալներ՝
     Տաթևիկ Ստեփանյան
     Աննա Ժամակոչյան
     Ռուբեն Սարգսյան

1. Մինչ Խորհրդի նիստի օրակարգի հարցերին անդրադառնալը՝ Նախագահը ողջունեց Խորհրդի մասնակիցներին՝ ծանոթանալով խորհուրդը համալրած ՀԿ նոր անդամների հետ:

Անդրադառնալով օրակարգային հարցին՝ Նախագահը խոսեց սոցիալական բարեկեցության 2022-2026թթ. ռազմավարության կարևորության մասին՝ նշելով, որ փաստաթղթի առանցքում մարդկային կապիտալի շարունակական զարգացման ապահովումն է՝ մրցունակության բարձրացման, մասնագիտական ներուժի իրացման ու ընտանիքի բարեկեցության ապահովման միջոցով:

2. Նախարարի խորհրդական Վիկտորյա Այդինյանը (այսուհետ՝ Զեկուցող) ներկայացրեց սոցիալական բարեկեցության 2022-2026թթ. ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն)՝ շեշտադրում կատարելով փոփոխության տեսության վրա, ըստ որի՝

- եթե ընտանիքը, համայնքն ու պետությունն ապահովեն երեխայի մարդկային կապիտալի լավագույն զարգացումն ու իրավունքի իրացումը,
- եթե պետությունը և մասնավոր հատվածի համագործակցությամբ ձևավորվի մրցունակ աշխատուժ և ապահովվեն արժանապատիվ աշխատանքային պայմաններ,
- եթե աշխատանքի և սոցիալական պաշտպանության համակարգն ի զորու լինի սպասարկել այս օրակարգը,
- եթե տարեցների՝ առողջ ծերացման հնարավորությունները զուգակցվեն վերջիններիս տնտեսական և մտավոր ներուժի իրացման հնարավորություններով,

ապա՝ յուրաքանչյուր անձ կունենա սոցիալապես արդար և պաշտպանված միջավայրում արժանապատիվ աշխատանքի միջոցով սեփական բարեկեցությունը կերտելու հնարավորություն:

Ռազմավարության հիմքում ընկած են՝

1. Երեխայի իրավունքների իրացման համար նպաստավոր պայմանների և միջավայրի ապահովումը,
2. Աշխատանքային տարիքի անձնանց համար արժանապատիվ աշխատանքի խրախուսումը, իրավունքին համահունչ երաշխիքների, կարիքահենք և թիրախային աջակցության ապահովումը,
3. Տարեցների համար սոցիալ-տնտեսական, մտավոր, ֆիզիկական ակտիվության համար նպաստավոր պայմանների ապահովումն ու սոցիալական երաշխիքների տրամադրումը,
4. Սոցիալական պաշտպանության համակարգի նախաձեռնողականության, արդյունավետության ու դիմակայունության ապահովման կարողության ապահովումը՝ մասնագիտական բարձր ներուժի, ժամանակակից տեխնոլոգիաների և փաստահենք կառավարման միջոցով:

Զեկուցողը ներկայացրեց նաև ռազմավարություն յուրաքանչյուր ոլորտի հիմնախնդիրներն ու ռազմավարական նպատակները, վերջնարդյունքի ցուցիչները:

3. «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպությունը, անդրադառնալով Ռազմավարությամբ նախատեսվող ծրագրերին, կարևորեց հավասար հնարավորությունների ապահովման ծրագրերի առկայությունը՝ մատնանշելով ոլորտում առկա բացերի՝ ժեստերի լեզվի ծառայության բացակայության, թարգմանիչների խնդրի, հաշմանդամություն ունեցող երեխաների հայտնաբերման, ինչպես նաև դպրոցներից առանց մասնագիտական կողմնորոշման դուրս գալու խնդիրների մասին:

Ի պատասխան հնչեցված հարցին՝ **Նախագահը** նշեց, որ Էկոնոմիկայի և ԿԳՄՍ նախարարությունների հետ համատեղ նախատեսվում է իրականացնել մասնագիտական կողմնորոշման բարձրացմանն ուղղված աշխատանքներ, որոնք արդեն մեկնարկել են Տավուշի մարզում, հերթականությամբ նախատեսվում է իրականցնել Գյումրիում, Երևանում:

Նախարարի տեղակալ **Տաթևիկ Ստեփանյանը** «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ-ի հնչեցրած հարցերին ի պատասխան խոսեց հաշմանդամություն ունեցող երեխաների հայտնաբերման մասին՝ առաջարկելով հարցում կատարել ԱՍՀՆ-ին՝ անհրաժեշտ տեղեկատվությունն ստանալու նպատակով: Ինչ վերաբերվում է ժեստերի լեզվի ծառայության բացակայության խնդրի կարգավորմանն ուղղված աշխատանքներին՝ նախարարի տեղակալը խոսեց դրանց հեռավար տրամադրելու հնարավորության ապահովման, պետությանը պատվեր իջեցնելու միջոցով խնդրի կարգավորման տեսլականի մասին:

Նախագահն ի լրումն նշեց ոլորտում մասնագետների բացակայության, աշխատատեղերը լրացնելու միջոցով խնդրի կարգավորման համար համակարգային մոտեցման անհրաժեշտության մասին:

«Սատար» ՀԿ-ն, անդրադառնալով զինվորական հաշմանդամություն ձեռք բերած անձանց շրջանում առկա խնդիրներին, բարձրաձայնեց 90-ական թվականների պատերազմի ընթացքում հաշմանդամություն ձեռքբերած անձանց տրամադրված պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և 44-օրյա պատերազմում նույն կարգավիճակն ունեցող անձանց տրամադրված պրոթեզաօրթոպեդիկ պարագաների որակական տարբերությունների վերաբերյալ՝ առաջարկելով իրականացնել կարիքի գնահատում՝ նախկինում տրամադրված ոչ բազմաֆունկցիոնալ պրոթեզները նոր և ժամանակակից պրոթեզներով փոխարինելու գործընթացն իրականացնելու նպատակով: Հարցադրում կատարվեց նաև հաշմանդամության 3-րդ և 2-րդ խմբերի արտոնությունների հավասարեցման հնարավորության մասին, ինչպես նաև հաշմանդամության խմբի բողոքարկումները միևնույն մարմնին ներկայացնելու խնդրից խուսափելու նպատակով անկախ կառույցներ ստեղծելու հնարավորության մասին: ՀԿ ներկայացուցիչը հետաքրքրվեց ոլորտային այլ հարցերով ևս, մասնավորապես՝ փոքր մարզերում անկախ կյանքի կենտրոններ նախատեսելու, Ռազմավարությամբ նախատեսված արագ արձագանքման խմբեր ստեղծելու և այլնի մասին:

Նախարարի տեղակալ **Տաթևիկ Ստեփանյանը** նշեց, որ փուլ առ փուլ նախատեսվում է պրոթեզաօրթոպեդիկ պարագաների փոխարինում նորերով: Անդրադառնալով հաշմանդամության 3-րդ և 2-րդ խմբերի արտոնություններին՝ **Տաթևիկ Ստեփանյանը** խոստացավ կարգավիճակների տարբերությունների և այլ հարցերի վերաբերյալ առողջապահության նախարարության հետ ՀԿ-ի հանդիպումը կազմակերպել՝ արտոնություններից օգտվելու տարբերությունների մասին պարզաբանումներ ստանալու նպատակով: Ինչ վերաբերվում է հաշմանդամության խմբի բողոքարկումներին, ապա, ըստ Տ. Ստեփանյանի, ներկայումս փորձաքննության և վերափորձաքննության մարմինները ՄՄԾ-ից դուրս կարգավորելու միակ օղակը դատարանն է:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը այս հարցի կապակցությամբ առարկեց՝ առաջարկելով անկախ վերափորձաքննության մարմին ձևավորել՝ ՄՄԾ-ից դուրս և մարդկանց ավելորդ դատական ծախսերի առջև չկանգնեցնել:

Տ. Ստեփանյանը, ընդունելով առաջարկը, նշեց, որ առաջիկայում ուսումնասիրություններ կկատարվեն ՄՄԾ փորձաքննության և վերափորձաքննության մարմինների սինքրոն աշխատանքի, աշխատանքի արդյունավետության առնչությամբ և եթե նկատվի, որ վերափորձաքննության վերաբերյալ քաղաքացիների բողոքները շատ են, ապա անկախ վերափորձաքննության մարմին ձևավորելը կդառնա անհրաժեշտություն:

«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչը խոսեց «Կամավորության մասին» օրենքի ընդունման կարևորության, ինչպես նաև

գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց աշխատանքը որպես ստաժ հաշվառելու հնարավորության, ինչպես նաև կենսաթոշակառուների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու հարցերի մասին:

Ի պատասխան Նախագահը նշեց, որ «Կամավորության մասին» օրենքն ընդունման փուլում է, առաջիկայում շատ ուսանողներ, ովքեր ցանկանում են աշխատել, բայց չունեն աշխատանքային փորձ, ինչին ուշադրություն են դարձնում շատ գործատուներ, կկարողանան կամավորության օրենքի համաձայն ձեռք բերել անհրաժեշտ պրակտիկան և անցնել աշխատանքի: Հնչեցված երկրորդ հարցի կապակցությամբ, Նախագահը նշեց, որ գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց աշխատանքը որպես ստաժ հաշվառելու խնդիրը տարիներ շարունակ քննարկվում է, սակայն դեռևս չեն մշակվել հստակ մեխանիզմներ ծրագրի իրականացման համար. առկա են բազմաթիվ խնդրահարույց դրույթներ՝ կապված գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց ստույգ թվաքանակի հայտնաբերման, նրանց կատարած աշխատանքը գնահատելու, ժամանակը ստույգ որոշելու և այլնի հետ: Նախագահը հավելեց նաև, որ կենսաթոշակառուների համար բարենպաստ պայմաններ ստեղծելը, ակտիվ ծերացման ապահովումը սահմանված է նաև Ռազմավարության մեջ: Նախատեսվում են ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան տարեցներին իրենց գիտելիքն ու փորձը ներդնել հասարակական կյանքում. այսպիսով ծերացումը պետք է դիտվի որպես կյանքը կենսաթոշակային տարիքում վայելելու հնարավորություն:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն ողջունեց Ռազմավարությամբ նախատեսված ծրագրերը, դրանք կյանքի կոչելու ուղիները՝ համարելով դրանք վերջին տարիների լավագույն ռազմավարությունը՝ ոլորտում էական բարեփոխումներ կատարելու տեսանկյունից: ԲՀԿ-ն հարցադրում կատարեց նվազագույն աշխատավարձի բարձրացման հետևանքով դրամաշնորհների չափի վերանայման հնարավորության մասին:

Ի պատասխան նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը նշեց, որ նախատեսվում է բազային աշխատավարձի, պետական աշխատողների աշխատավարձերի զուգահեռաբար բարձրացում, և որ բոլոր նվազագույն չափանիշները փոփոխվելու են 2023 թվականից:

Հաշվի առնելով ԲՀԿ-ի մտահոգությունները՝ կապված դրամաշնորհների չափի հետ՝ Նախագահը նշեց, որ վերանայման անհրաժեշտությունը կընդունվի ի գիտություն և առաջիկայում քննարկումներ կարվեն այդ հարցի վերաբերյալ:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը կարևոր խնդիր համարեց ուսուցումից դուրս մնացած երեխաների առկայությունը: Նա նշեց, որ անհրաժեշտ է ոչ թե նվազեցնել այդպիսի երեխաների թվաքանակը, այլ պետք է բացառել նրանց առկայությունը՝ այդ գործընթացում ներգրավելով ՏԻՄ-երին:

Նախագահը, համաձայնելով բարձրաձայնված կարծիքին, խնդրի կապակցությամբ նշեց, որ մսուրից սկսած կյանքի բոլոր փուլերում պիտի լինեն երեխայի իրավունքների պաշտպանության ապահովում: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել՝ համագործակցելով ԿԳՄՍ նախարարության հետ:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունն առաջարկեց ուշադրություն դարձնել նաև միգրանտ աշխատողների խնդրին, ՌԴ-ից ՀՀ տեղափոխվածների՝ աշխատանքային պայմանագրերին, գործատուներին լիցենզիա տրամադրելուց առաջ անվտանգ աշխատանքային պայմաններ ստեղծելու պահանջ ներկայացնելու անհրաժեշտության, աշխատանքային ապահովության վերաբերյալ հարցերը կարգավորելիս ՄԱԿ-ի կոնվենցիայով առաջնորդվելու մասին հարցերին:

Նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը նշեց, որ զբաղվածության ոլորտում բարեփոխումները մշտապես ԱՍՀՆ ուշադրության կենտրոնում են: Ներկայումս խմբագրվում է Աշխատանքային օրենսգիրքը, որտեղ արդեն իսկ տեղ են գտել մի շարք դրույթների հստակեցումներ և բարեփոխումներ:

Նախագահը հավելեց, որ բարեփոխումներ նախատեսվում են կենսափուլերով. շեշտադրում է կատարված կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվածների, երիտասարդների աշխատուժի զարգացման, երիտասարդ մայրերի, կանանց զորեղացման հարցերին՝ ուղեկցվող դեմոգրաֆիական ցուցանիշների բարձրացման քաղաքականությամբ:

Նիստի ավարտին Նախագահը շնորհակալություն հայտնեց հասարակական խորհրդի անդամներին ներկայության և ակտիվ մասնակցության համար՝ նշելով, որ վերջիններիս կողմից ներկայացված առաջարկներն ու դիտարկումները հնարավորություն կտան նախատեսվող բարեփոխումները դարձնել առավել կառուցողական և արդյունավետ:

8/4/2022

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804 **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձանագրությունը կազմեց՝ Ա. Մնացականյան